



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

21 հունիսի 2024 թվական

### ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Ձոնիկ Հարությունյանը, Վարուժան Հարությունյանը, Հովհաննես Մարգարյանը, Թինա Մելքոնյանը, Միեր Ներսիսյանը, Գարեգին Շաբոյանը, Հերմինե Վարդանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Հենրիկ Պողոսյան, Սրբուհի Մելիքյան, Մերդինե Գուրգենյան, Լիլիթ Գասպարյան, Թամարա Գյաղուկյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կարեն Մանուկյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Համլետ Ավետիսյանը**  
Լսեցին

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝** Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 21-ի թիվ 7 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բնակիչներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված «Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և/կամ կապիտալ ակտիվի ձեռք բերում» 5511 հոդվածից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը գումար տրամադրելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բնակավայրերից զոհված (մահացած) զինծառայողներին անշարժ գույքի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրում գտնվող մարզասրահի մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող



վճարների դրույքաչափերը ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 77-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 75-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի երկրորդ գումարման նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՌՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ԱՅԼ ՆՊԱՍՏԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ&> 4729**

**ՀՈԴՎԱԾԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ**

**ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 9-ի թիվ 22-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի թվով 9 բնակիչների Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից, /բաժին 10, խումբ 4, դաս 1, տող 3040 «Ընտանիքի անդամներ և զավակներ»/ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի թվով 9 բնակիչներին տրամադրել միանվագ դրամական օգնություն՝ 270000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ ընդհանուր գումարով՝ համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՌՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ**



**ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ/ԿԱՄ ԿԱՊԻՏԱԼ ԱԿՏԻՎ ԶԵՌՔ ԲԵՐՈՒՄ>> 5511  
ՀՈՂՎԱԾԻՑ <<ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ>> ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հետ կնքված թիվ 502/PRE/23/05 պայմանագիրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված «Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և/կամ կապիտալ ակտիվի ձեռք բերում» 5511 հոդվածից, /բաժին 01, խումբ 6, դաս 1, տող 2161 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ»/ «Վերականգնող էներգիայի և էներգաարդյունավետության խթանում Շիրակի մարզի համայնքներում» ծրագրի իրականացման նպատակով որպես համայնքային ներդրում <<Հայկական Կարիտաս>> բարեսիրական հասարակական կազմակերպությանը տրամադրել ծրագրի ընդհանուր արժեքի տաս տոկոսը՝ 1608000 /մեկ միլիոն վեց հարյուր ութ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՆՇԱՐԺ  
ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 230-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով, 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բնակավայրերից Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) զինծառայողներին անշարժ գույքի հարկի գծով սահմանել արտոնություն՝ համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՑՔ  
ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՄԱՐԶԱՍՐԱՀԻ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**



**ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ, 42-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրում գտնվող մարզասրահի մատուցվող ծառայությունների դիմաց վճարների դրույքաչափերը ու պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Իրավունք վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին, սույն որոշման հավելվածով սահմանված մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների համար կիրառել արտոնություններ:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Լ/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 77-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 77-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման» հատված 2-ում՝

ա. Բաժին 1, խումբ 6, դաս 1, 2161 տողում «89573.8» թիվը փոխարինել «87973.8» թվով,

բ. Բաժին 4, խումբ 2, դաս 1, 2421 տողում «3200.0» թիվը փոխարինել «3300.0» թվով,

գ. Բաժին 8, խումբ 2, դաս 3, 2823 տողում «24900.0» թիվը փոխարինել «26400.0» թվով:

2) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման» հատված 3-ում՝

ա. Հոդված 5113, 5113 տողում «191273.6» թիվը փոխարինել «187723.6» թվով,

բ. Հոդված 5129, 5123 տողում լրացնել «100.0» թիվ,

գ. Հոդված 5132, 5132 տողում «350.0» թիվը փոխարինել «600.0» թվով,

դ. Հոդված 5134, 5134 տողում «46265.0» թիվը փոխարինել «47765.0» թվով,

ե. Հոդված 5511, 5511 տողում «1735.0» թիվը փոխարինել «3435.0» թվով:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ն/



Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-րդ հոդվածի դրույթներով, 31-րդ հոդվածի 1.8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն 1-3 հավելվածների:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 75-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի N 1531-Ն որոշման 5-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2024 թվականի հունիսի 19-ի N 02.1//05599-2024 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի 2024 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույթաչափերը հաստատելու մասին» N 75-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 6-րդ ենթակետի գ.\* պարբերության «167000» թիվը փոխարինել «177600» թվով, «175000» թիվը փոխարինել «185600» թվով, «2100000» թիվը փոխարինել «2227200» թվով:
2. Որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 6-րդ ենթակետի ընդամենը տողի «1161000» թիվը փոխարինել «1171600» թվով, «4587000» թիվը փոխարինել «4597600» թվով, «55044000» թիվը փոխարինել «55171200» թվով:
3. Որոշմամբ հաստատված հավելվածի ընդամենը աշխատակազմ տողի «7986360» թիվը փոխարինել «7996960» թվով, «16283360» թիվը փոխարինել «16293960» թվով, «195400320» թիվը փոխարինել «195527520» թվով:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ**



**ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ  
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/ԶԵԿ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու կանոնակարգի 91-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի երկրորդ գումարման նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի սեպտեմբերի 10-ը՝ ժամը՝ 15:00:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ա/

Ավագանու անդամներ

ՄԱՐԳԱՐԻՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԷԼՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳԵՂԱՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼԻԱՆՆԱ ՀԱՅԿՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՐԱՆՏԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ



Նիստին արձանագրեց՝ Համլետ Ավետիսյանը